

2015թ. երկրորդ եռամսյակի խոշոր հարկ վճարողների ՀՏ մոնիտորինգի ամփոփ ցուցանիշների վերլուծություն

Սույն վերլուծությունը իրականացվում է այն 532 հարկ վճարողների ամփոփ ցուցանիշների հիման վրա, որոնք ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրամանով ընդգրկված են խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության կողմից 2015թ.-ի ընթացքում սպասարկվող հարկ վճարողների ցանկում:

Խոշոր հարկ վճարողների մոնիտորինգի ամփոփ ցուցանիշների համեմատական վերլուծությունը իրականացվում է նույն 532 հարկ վճարողների 2015 և 2014 թվականների փաստացի տվյալների հիման վրա:

2015թ. երկրորդ եռամսյակի ամփոփ ցուցանիշների վերլուծության հիման վրա կարելի է փաստել, որ

1. Իրացումից հասույթը կազմել է 920.5 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ ավել է 3.5 %-ով:
2. Ներմուծման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ նվազել են 6.6 %-ով և կազմել 246.5 մլրդ դրամ:
3. Արտահանման ծավալները նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ աճել են 13.3%-ով և կազմել 136.7 մլրդ դրամ:
4. Վճարված մաքսային վճարների ցուցանիշի առումով 2015թ.-ի երկրորդ եռամսյակում խոշոր հարկ վճարողների կողմից վճարվել է շուրջ 36 մլրդ. դրամ:
5. Պետական բյուջե վճարված հարկերի և այլ պարտադիր վճարների ցուցանիշի առումով 2015թ.-ի երկրորդ եռամսյակում խոշոր հարկ վճարողների կողմից վճարվել է շուրջ 106.3 մլրդ. դրամ: Ընդ որում, նշված կազմակերպությունների կողմից 2015թ.-ի երկրորդ եռամսյակում վճարվել է հանրապետությունում հավաքագրված հարկային եկամուտների 53.5 %-ը:
6. Հարկային մարմնի կողմից կատարվել են թվով 233 հարկային ստուգումներ, այդ թվում բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության 133 ստուգումներ, որոնց արդյունքում առաջադրվել է բյուջե լրացուցիչ վճարման ենթակա գումարներ 1,6 մլրդ. դրամի չափով:
7. 01.07.2015թ.-ի դրությամբ խոշոր հարկ վճարողներն ունեցել են 120.1 մլրդ. դրամ գերավճար, այդ թվում՝ ավելացված արժեքի հարկի գծով՝ 85.6 մլրդ. դրամ, իսկ հարկային պարտավորություն՝ 20.4 մլրդ. դրամ: Նշված

Ժամանակահատվածում պետական բյուջեից հարկ վճարողների գերավճարների գումարներից ավելացված արժեքի հարկի վերադարձի ձևակերպում է կատարվել 5.9 մլրդ դրամի չափով, իսկ գերավճարների գումարներից այլ հարկատեսակների գծով հաշվանցվել է 4.8 մլրդ դրամի չափով:

8. Աշխատողների միջին ցուցակային թիվը դիտարկվող ժամանակահատվածում կազմել է 154950 մարդ, իսկ մեկ աշխատողի միջին ամսական ԱՎՈՒՄ-ը կազմել է 231 հազար դրամ, նախորդ տարվա 201 հազար դրամի փոխարեն: